

1. Ո՞ր կը գտնուի Գազաւոնի հայոց վանքը .

Անաստաս վրդ.ի խօսքերը բացատրեցինք պատմական եւ հնախօսական տեսակէտով եւ հասկցանք թէ Ս. Յարութեան Տաճարին նախադրումը ո՞ր տեղը կը վերջանային եւ ո՞ւր պէտք է փնտռել Գազաւոնի մեր վանքը: Երուսաղէմի պատմիչ Աստուածատուր եպիսկոպոս իր Ժամանակագրական Պատմութեան մէջ կը յիշատակէ (Տե՛ս Ա. Հտր. էջ 91-92) Անաստասի Հայ Վանօրէից Յուցակը, ան այս վանքին նկատմամբ ծանօթագրութիւն մը ունի. բայց քառասուն տարի առաջուան այդ տեղագրութիւնը նոր չէնքերու յաւելումներով փոփոխուած ըլլալով՝ չէր կրնար առաջնորդել մեզ Ս. Հռիփսիմէի եւ Գայիանէի հայկական վանքին տեղը. իսկ Ուղեցոյց Սրբազան Տեղեաց գրքին (էջ 166-67) մէջ բերած յիշատակութիւնը բոլորովին հարեանցի է եւ ոչ մի բացատրութիւն չունի նոյն վանքի պատմական ծագումի մասին, միայն կ'ընդունի թէ ան հայոց եօթանասուն վանքերէն մին է: Մենք ուզեցինք անձամբ ճշդել նոյն վանքին տեղը, ուստի ընկերակցութեամբ Ս. Յարութեան Տեսուչ Տ. Յակոբ վրդ. Թաշճեանի եւ Ժառ. Վարժ.ի արարերէնի ուսուցիչ Վարդան Մաթոսեանի այցելեցինք նախ նախադրումի աւերակները որ, ինչպէս վերեւ նկարագրեցինք, կը գտնուին Ռուսաց շէնքին մէջ, յետոյ մեր ստացած ծանօթութեանց համաձայն, շէնքի արեւելեան կողմի ճանապարհին վրայ գտնուած խանութպաններէն մէկ քանին հարցնովորձելով անոնցմէ միոյն կողմէն առաջնորդուեցանք, զէպ արեւելք մերձակայ կողմնակի նեղ ճանապարհի մը վրայ բացուած դրան մը, որուն բացումով մեր առջև պարզուեցաւ քարուկիւր մութ շէնք մը, չափազանց սեցած եւ աւրուած պատերով եւ որ հազիւ կը լուսաւորուէր առաստաղի բացուածքէն. առաջին առթիւ որ շէնքէն ներս մտանք, մենք համոզուեցանք թէ հայկական եկեղեցիի մը մէջ կը գտնուինք. վասն զի նոյն շէնքին գմբէթը՝ որ կ'լսակործան էր, եկեղեցիին ճիշդ մէջտեղը կը գրտնուէր չորս սիւներու վրայ. եկեղեցին հողով լեցուն էր, գրեթէ մինչև կամարները, այնպէս որ բոլոր հնութիւնները ծածկուած էին. միայն հողէն վեր կ'երևէին եկեղեցիին տաներկու կարծրաքար սիւներու խոյակները. զուտը արեւմտեան կողմը կ'երևար, վասն զի պատին կցուած երկու սիւներուն մէջ նեղ բա-